



**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատականը
«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագծի
վերաբերյալ**

Բովանդակություն

1. Նախագծի մշակման ժամանակագրական ընթացքը.....	2
2. Խոշտանգումների կանխարգելման մեխանիզմի ինստիտուցիոնալ ձևաչափի վերաբերյալ.....	3
3. Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման քաղաքական կամքի բացակայության վերաբերյալ.....	6
4. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի որպես մենաշնորհային ինստիտուտի ձևավորման մասին.....	10
5. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի որպես մենաշնորհային ինստիտուտի ձևավորման վտանգները.....	12
6. Ամփոփում.....	14



1. Նախագծի մշակման ժամանակագրական ընթացքը

1.1 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի փոփոխման ուղղությամբ աշխատանքները կարելի է բաժանել երկու փուլերի՝ մինչսահմանադրական և հետսահմանադրական փոփոխությունների:

Մինչսահմանադրական փոփոխությունների փուլ

1.2 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական տարբերակը մշակվել է 2014 թվականի հուլիսին:

1.3 Նախագծի լրամշակված տարբերակը 2015 թվականի մարտի 10-ին ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարին, իսկ մարտի 11-ին ուղարկվել է նաև հասարակական կազմակերպություններին, այդ թվում՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին՝ նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

1.4 Նախագծի ընդունման հիմնական նպատակն էր օրենսդրորեն ամրագրել Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի (հետայսու նաև՝ ԽԿԱՄ) «Օմբուդսմեն պլուս» մոդելը՝ նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական հասարակության՝ որպես լիարժեք և հավասար գործընկերոջ ներգրավումը ԽԿԱՄ-ում:

1.5 Նախագիծը, սակայն, որևէ զարգացում չապրեց, որը պայմանավորված էր 2015 թվականի դեկտեմբերին նախատեսվող սահմանադրական փոփոխություններով:

Հետսահմանադրական փոփոխությունների փուլ

1.6 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում պարտադրվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխությունները¹:

1.7 ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագրով հաստատվեց Սահմանադրական փոփոխություններով անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը, այդ թվում նաև՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը:

¹Տե՛ս [ՀՔԱՎ գնահատականը ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ](http://hca.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf)
Տե՛ս նաև ՀՔԱՎ գեկույցը Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ <http://hca.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf>



1.8 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (հետայսու նաև՝ Նախագիծ) ս.թ. ապրիլի 29-ին ՀՀ արդարադատության նախարարի կողմից ներկայացվել է ԱԺ-ին:

1.9 2016 թվականի հունիսի 6-ին Նախագիծը ընդգրկվել է ՀՀ ԱԺ նստաշրջանի օրակարգ:

1.10 2016 թվականի հոկտեմբերի 13-ին ՀՀ ԱԺ ներկայացվել է օրենքի նախագծի լրամշակված տարբերակը:

1.11 2016 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել է խորհրդարանական լսումներ՝ քննարկելու «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը:

1.12 2016 թվականի նոյեմբերի 14-ին Նախագիծը ընդգրկվել է նոյեմբերի 14-17-ի չորսօրյա նիստերի օրակարգ²:

Ստորև ներկայացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ:

Սույն փաստաթուղթը կազմելու համար ուսումնասիրվել են ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման Ենթակոմիտեի ազգային կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ ղեկավար սկզբունքները³, ԵԽ Նախարարների կոմիտեի, ԵԽԽՎ հանձնարարականները, ինչպես նաև այլ միջազգային կառույցների կարծիքները՝ խոշտանգումների ազգային կանխարգելման մեխանիզմի ինստիտուտի վերաբերյալ:

2. Խոշտանգումների կանխարգելման մեխանիզմի ինստիտուցիոնալ ձևաչափի վերաբերյալ

2.1 Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ԽԿԱՄ-ի ինստիտուցիոնալ ձևաչափի/մոդելի ընտրության մի շարք մոտեցումներ. որոշ պետություններ ստեղծել են առանձին մարմին, այլ պետություններում որպես ԽԿԱՄ հանդես է գալիս Մարդու իրավունքների պաշտպանը, իսկ որոշ պետություններում էլ ներդրվել է «Օմբուդսմեն-պլյուս» մոդելը⁴:

² Տե՛ս Նախագծի պատմություն՝ http://parliament.am/draft_history.php?id=8383

³ Տե՛ս http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/OP/12/5&Lang=en

⁴ Տե՛ս՝ http://helsinki.hu/wp-content/uploads/Murray_briefing_paper.pdf



2.2 Նախագծի հիմնավորման մեջ հեղինակները հղում են կատարում 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրությանը և Նախագծով առաջարկվող կարգավորումները հիմնավորում են միմիայն սահմանադրական մոտեցումներով: Մինչդեռ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման հեղինակները պետք է հաշվի առնեն ՀՀ կողմից ստանձնված պարտավորությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի դրույթները⁵:

2.3 Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը Սահմանադրության 191-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձն է:

2.4 ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

2.5 Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված Կամբոջիայի արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ:

2.6 Նախագծի 5-րդ գլուխը կարգավորում է Պաշտպանի գործունեությունն առանձին ոլորտներում: Որպես ԽԿԱՄ Պաշտպանի գործունեության նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումը ազատությունից զրկման վայրերում: ԽԿԱՄ գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում ստեղծվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում (Նախագծի հոդված 27 և 2-րդ մաս):

2.7 Նախագծի 29-րդ հոդվածը սահմանում է Պաշտպանի լիազորությունները որպես խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ԽԿԱՄ կարգավիճակի շրջանակներում մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով, այդ մասին պաշտոնական կայքում կամ հրապարակային այլ աղբյուրներով արված հայտարարությամբ առաջադրված պահանջների հիման վրա, Պաշտպանը *կարող է* ներգրավել անկախ մասնագետներ և

⁵ Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության թիվ 303-Ն որոշմամբ հաստատված ՄԻՊԱՌՄՕ 113-119 գործողություններ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97193>



հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք ձեռք են բերում կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ:

2.8 Վերոնշյալ փորձագետները ԽԿԱՄ աշխատանքներին ներգրավվում են Պաշտպանի հրամանով՝ նրանց հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա: Նրանց աշխատանքի վարձատրությունն իրականացվում է Պաշտպանի սահմանած կարգով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այդ նպատակով Պաշտպանի աշխատակազմին հատկացված ֆինանսական միջոցներից: Կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների աշխատակարգը, ինչպես նաև նրանց վարքագծի կանոնները սահմանվում են Պաշտպանի կողմից (հոդված 28 և 5-րդ մաս):

2.9 Նախագծի 32-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը կարող է ստեղծել իրեն առընթեր խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների բնագավառում անհրաժեշտ փորձ և գիտելիքներ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից: Խորհրդի անդամներին հրավիրում է Պաշտպանը: Խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է Պաշտպանը:

2.10 Վերոնշյալ կարգավորումները ցույց են տալիս, որ Նախագծով որպես խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ դիտարկվում է Մարդու իրավունքների պաշտպանը, և որն իր հերթին միանձնյա որոշում է ՀԿ-ների ներկայացուցիչների, փորձագետների ներգրավման ձևաչափը և նրանց գործունեության շրջանակները: Նման կարգավորման պարագայում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ԽԿԱՄ-ում չեն դիտարկվում որպես լիարժեք և հավասար գործընկեր և զրկվում են որոշումների կայացման հնարավորությունից: Մինչդեռ «Օմբուդսմեն-պլուս» մոդելը նախատեսում է Մարդու իրավունքների պաշտպանի և հասարակական կազմակերպությունների որպես հավասար գործընկերների ներգրավմամբ խոշտանգումների ազգային կանխարգելման մեխանիզմի ձևավորում և գործարկում: Ընդ որում, այս կարգավորման անհրաժեշտության մասին նշել է ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման Ենթահանձաժողովը⁶:

2.11 Տեղին է նշել, որ ՀՀ գործող Մարդու իրավունքների պաշտպանը որևէ գնահատական չտվեց ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական դիտորդների խմբի ներկայացուցիչների նկատմամբ ՀՀ արդարադատության նախարարության և քրեակատարողական վարչության կողմից ակնհայտ ապօրինի սահմանափակումներին, որը կիրառվեց 2016 թվականին հուլիս-հոկտեմբեր ամիսներին, երբ արգելվեց Խմբի ներկայացուցիչների հանդիպումը կալանավորված

⁶ Տե՛ս http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/OP/12/5&Lang=en

որոշ անձանց հետ: Այս հանգամանքը ուշագրավ է գործող Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների գործունեության արժևորման և գնահատման տեսանկյունից:

2.12 Նախագծի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանի աշխատակազմը կազմված է երկու դեպարտամենտից, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանումից, քարտուղարությունից, մարզային և Պաշտպանի որոշմամբ ստեղծվող այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև Պաշտպանի խորհրդականներից, օգնականներից և մամուլի քարտուղարից:

2.13 Նախագծի համաձայն՝ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք ՀՀ ԱԺ-ում և ՀՀ Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ որպես Պաշտպանի ներկայացուցիչներ (հոդված 35 և 3-րդ մաս):

2.14 Նախագծի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանն է սահմանում աշխատակազմի ստորաբաժանումների իրավասությունները, կանոնադրությունները և կառուցվածքները:

2.15 Պաշտպանի կողմից իր աշխատակազմի իրավասությունների սահմանումը հանդիսանում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անկախության երաշխիք: Սակայն Պաշտպանի կողմից Նախագծով սահմանված ԽԿԱՄ-ի գործառույթների իրականացումը սահմանափակում է ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման Ենթահանձաժողովի սկզբունքների համաձայն հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և փորձագետների՝ որպես հավասար գործընկերների ներգրավմանը ԽԿԱՄ-ում:

3. Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման քաղաքական կամքի բացակայության վերաբերյալ

3.1 Միջազգային փորձը փաստում է, որ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ազգային մեխանիզմները առավել արդյունավետ են գործում, եթե ստեղծվում են մի քանի մասնագիտացված օմբուդսմեններ: Մասնագիտացված օմբուդսմենների միջոցով պետությունը առավել արդյունավետ է իրականացնում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնած պարտավորությունները:

3.2 Այսպես՝ մի շարք երկրներում, բացի հիմնական օմբուդսմենի ինստիտուտից, գործում է Երեխաների իրավունքների պաշտպան, ինչպես օրինակ՝ Հոլանդիայում⁷,

⁷ Տե՛ս Հոլանդիայի երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտը
<https://www.dekinderombudsman.nl/241/english/>,



Էստոնիայիում⁸, Շվեդիայում⁹, իսկ օրինակ ԱՄՆ-ի որոշ նահանգներում գործում է տարեց մարդկանց իրավունքների օմբուդսմեն, Սկանդինավյան երկրներում գործում են հավասար հնարավորությունների (գենդերային) հարցերով զբաղվող օմբուդսմեններ: Դանիայում, ներկայումս գործում է նաև սպառողների իրավունքների պաշտպան, Հունգարիայում՝ անձնական տվյալների պաշտպան և այլն¹⁰:

3.3 Այսպիսով՝ միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ պետություններում մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների զարգացումը ընթանում է մասնագիտացված օմբուդսմենների ձևավորման տրամաբանությամբ:

3.4 ՀՀ Կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի (հետայսու նաև՝ ՄԻՊԱՌՄՕ)¹¹ 115-րդ կետով որպես գործողություն սահմանված էր «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումների համաձայն Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը, իսկ 114-րդ կետով՝ մինչև Ռազմական օմբուդսմենի հիմնադրումը նախատեսվում էր «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին տարեկան թեմատիկ զեկույցի հրապարակում՝ ըստ ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի:

3.5 Մինչդեռ 2015 թվականին մշակված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել էր այլ կարգավորում, որի համաձայն՝ Պաշտպանի տեղակալներից մեկը Պաշտպանի հանձնարարությամբ գործունեություն պետք է իրականացնի զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում, և յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում այդ տեղակալը Պաշտպանին պետք է ներկայացնեք զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույց:

3.6 Նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալներից մեկի մակարդակով զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում գործունեության իրականացումը չի համապատասխանում ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականի 9-րդ հոդվածի 9.2 կետին, համաձայն որի՝ Ռազմական օմբուդսմենը պետք է լինի անկախ մարմին¹²:

⁸ Տե՛ս Էստոնիայի երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտը <http://lasteombudsman.ee/en/welcome>

⁹ Տե՛ս Շվեդիայի երեխաների իրավունքների օմբուդսմենի ինստիտուտը <https://www.crin.org/en/library/organisations/ombudsman-children-sweden>

¹⁰ Տե՛ս Բուդիկ Ա., Լազարեա Լ. Ինստիտուտ սպեցիալիզացիոննո և մեցնո օմբուդսմենա կակ մեխանիզմ Զաշիտի Բրավ Շելովեկա: Զարուբեժնոյ օփը

¹¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության թիվ 303-Ն որոշմամբ հաստատված ՄԻՊԱՌՄՕ 113-119 գործողություններ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97193>

¹² Տե՛ս ՀՔԱՎ առաջարկությունների փաթեթը Անկախ ռազմական օմբուդսմենի ինստիտուտը որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմի վերաբերյալ <http://hcav.am/wp->



3.7 Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին հասարակական կազմակերպությունների զեկույցներում և հրապարակումներում բազմիցս ներկայացվել են լուրջ մտահոգություններ¹³: ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ խնդիրները արձանագրվել են նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի¹⁴ և Խոշտանգումների դեմ կոմիտեի¹⁵ և այլ միջազգային կազմակերպությունների զեկույցներում¹⁶:

3.8 ԵԽԽՎ 1742 (2006) հանձնարարականը Վեհաժողովի անդամ պետություններին առաջարկում է որպես զինժառայողների իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց ներդնել ռազմական օմբուդսմենի անկախ քաղաքացիական ինստիտուտը:

3.9 Նշված հանձնարարականի բացատրական հուշագրի V մասի 85-րդ կետի համաձայն՝ զինժառայողները իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով պետք է հնարավորություն ունենան գանգատ ներկայացնել անկախ մարմին¹⁷: Նման անկախ մարմնի լավագույն օրինակն է Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

3.10 Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման անհրաժեշտության մասին նշվում է ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնկյան կենտրոնի կողմից պատրաստված «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկում¹⁸:

3.11 Ռազմական օմբուդսմենի գրասենյակները հիմնադրվել են որպես հասարակություն - զինված ուժեր հարաբերությունների վերագնահատմանն ուղղված ջանքերի մի մաս: Այսպիսի ինստիտուտների տեսակին է պատկանում

content/uploads/2015/07/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D5%B4%D5%A2%D5%B8%D6%82%D5%A4%D5%BD%D5%B4%D5%A5%D5%B6.docx.pdf

¹³ Տե՛ս ՀՔԱՎ զեկույցը «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում» <http://hcav.am/wp-content/uploads/2014/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%812.pdf>

¹⁴ Տե՛ս UN Human Rights Committee/Consideration of reports submitted by States parties under article 40 of the Covenant, Concluding observations adopted by the Human Rights Committee at its 105th session, 9-27 July 2012

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/ARM/CO/2&Lang=En

¹⁵ Տե՛ս Committee against Torture Forty-eight session 7 May-1 June 2012/ Consideration of reports submitted by States parties under article 19 of the Convention Concluding observations of the Committee against Torture

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/3&Lang=En

¹⁶ Տե՛ս Amnesty International annual report 2015/2016 <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/armenia/report-armenia/>

Տե՛ս նաև Human Rights Watch World report 2015: Armenia <https://www.hrw.org/world-report/2015/country-chapters/armenia>

¹⁷ Տե՛ս Human rights of members of the armed forces – Recommendation CM/ Rec (2010) 4 and explanatory memorandum http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/Others_issues/Armed_Forces/Rec/Publication_FA_ru.pdf

¹⁸ Տե՛ս Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին <http://www.osce.org/hy/odihr/88572>



Գերմանիայում 1959թ.-ին ստեղծված ինստիտուտը, որը նաև հիմք հանդիսացավ Նորվեգիայում (1952) և Ավստրիայում (1955) զինված ուժերի հետ կապված հարցերով օմբուդսմենի գրասենյակների հիմնադրման համար¹⁹:

3.12 Ռազմական օմբուդսմենի ստեղծման հիմնական շարժառիթներից է զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների քննության արդյունավետության բարձրացումը, օրինակ՝ Բելգիայում, Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում զինծառայողների իրավունքների հարցերով զբաղվող պաշտպանի գրասենյակները ձևավորվել են, քանի որ մտահոգություն կար, որ գոյություն ունեցող ad hoc համակարգերը բավարար չէին բոլոր բողոքները հասցեագրելու համար:

3.13 ՄԻՊԱՌՄԾ-ով սահմանված Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը (115-րդ գործողություն) նախատեսված էր հիմնադրել մինչև 2014 թվականի չորրորդ եռամսյակը, սակայն ՀՀ Կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 1302-Ն որոշմամբ նշված գործողության կատարման ժամկետը երակարաձգվեց մինչև 2016 թվականի առաջին եռամսյակ²⁰:

3.14 Ի պատասխան ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2016 թվականի օգոստոսի 6-ի թիվ 412 գրության՝ ՄԻՊԱՌՄԾ կատարման ընթացքի վերաբերյալ հարցադրումների, 115-րդ գործողության կատարման համար պատասխանատու մարմին հանդիսացող ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հայտնել է, որ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում տարբեր պետությունների փորձը և միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներն այս հարցի վերաբերյալ:

3.15 ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նշված դիրքորոշումը ամբողջությամբ հակասում է թե՛ առանձին պետությունների փորձին (Գերմանիա²¹, Հոլանդիա²², Կանադա²³ և այլն), թե՛ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներին՝ ԵԽԽՎ, Ձինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն:

3.16 2016 թվականի նոյեմբերի 10-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած խորհրդարանական լսումների ժամանակ Կազմակերպության կողմից վերստին բարձրաձայնվեց անկախ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման

¹⁹ Sté u Ombuds institutions for the Armed Forces a handbook. DCAF <http://www.dcaf.ch/Publications>

²⁰ Sté u ՀՀ կառավարության 12 նոյեմբերի 2015 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի 303-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշուման 1-ին մասի 15-րդ կետ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101581>

²¹ Sté u Parliamentary Commissioner for the Armed Forces

<http://www.bundestag.de/en/parliament/commissioner/commissioner/198744>

²² Sté u The Inspector-General of the Netherlands Armed Forces <http://www.mindef.nl/ministerie/igk/english/index>

²³ Sté u Ombudsman for National Defence and the Canadian Forces <http://www.ombudsman.forces.gc.ca/>

անհրաժեշտության մասին, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մեկ անգամ ևս նշվեց, որ անկախ Ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը աննպատակահարմար է, իսկ զինճառայողների իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանի աշխատակազմում գործելու է առանձին ստորաբաժանում:

3.17 Այսպիսով արձանագրում ենք, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հետևողականորեն մերժում է անկախ ռազմական օմբուդսմենի ստեղծման գաղափարը:

4. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մենաշնորհային ինստիտուտի ձևավորման մասին

4.1 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը (հետայսու նաև՝ Օրենք) ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին: Օրենքով սահմանված չեն մարդու իրավունքների պաշտպանության առանձին բնագավառներ, որոնցով զբաղվելու է Մարդու իրավունքների պաշտպանը:

4.2 2006 թվականի սեպտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» Կամբոջիայի արձանագրությունը (ՀՀ-ն կոնվենցիան վավերացրել է 1993 թվականի սեպտեմբերի 13-ին), որի համաձայն՝ պետք է ստեղծել խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ:

4.3 2008 թվականի ապրիլի 8-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարվեց լրացում, որի համաձայն՝ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» Կամբոջիայի արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ²⁴:

4.4 Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի ձևավորմանը նվիրված քննարկումների ընթացքում, որին մասնակցում էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից մշակվեց օրենքի նախագիծ, որով առաջարկվում էր ներդնել «Օմբուդսմեն-պլուս» մոդելը: Սակայն քննարկումների ընթացքում, առանց հասարակական կազմակերպությունների կարծիքը հաշվի առնելու, ՀՀ ԱԺ-ն որպես ԽԿԱՍ ճանաչեց միայն Մարդու իրավունքների պաշտպանին:

4.5 Առաջարկվող Նախագծում նախատեսվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանը պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետության կողմից 1992

²⁴ Տե՛ս 2008 թ. ապրիլի 8-ի «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքը <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=43714>



թվականի հունիսի 1-ին վավերացված ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների կիրառության մոնիթորինգ, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն²⁵:

4.6 Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք այլ կոնվենցիաներ, մասնավորապես՝ 1993 թվականին՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, 1995 թվականի հուլիսի 29-ին՝ «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին» կոնվենցիան, 2004 թվականի մարտի 1-ին՝ «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան», 2007 թվականի մարտի 30-ին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, 2011 թվականի փետրվարի 23-ին՝ «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» կոնվենցիան և այլն: Մակայն Նախագծով չեն սահմանվում ՀՀ կողմից վավերացված նշված և այլ կոնվենցիաներով սահմանված Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվելիք գործառույթները:

4.7 Այսպիսով՝ ակնհայտ է Նախագծով խտրական և տարբերակված մոտեցումը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաների և միջազգային պարտավորություններով մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների սահմանման տեսանկյունից, ավելին՝ Նախագծի հիմնավորման մեջ չի ներկայացվում, թե ինչու պետք է հիշատակվեն միայն երկու կոնվենցիաները:

4.8 Առաջարկվող Նախագծով նախատեսվում է խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի, զինձառայողների իրավունքների պաշտպանության, երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման գործառույթներն ապահովելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում ստեղծել առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ:

4.9 Նման մոտեցմամբ Նախագծով սահմանվում է մի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մենաշնորհային և միակ ինստիտուտի ձևավորումը՝ ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության նշված բոլոր բնագավառներում, մյուս կողմից էլ օրենքը ամրագրում է խտրական մոտեցում՝ սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության նկատմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների սահմանման տեսակետից:

4.10 Նման մոտեցմամբ Նախագիծը սահմանափակում է մասնագիտացված օմբուդսմենների ստեղծումն հնարավորությունը: Մինչդեռ մասնագիտացված օմբուդսմենների ստեղծումը կխթաներ մարդու իրավունքների պաշտպանության

²⁵ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 2-ի 3-րդ մաս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8383&Reading=0>



մեթոդների, գործիքակազմի բազմազանության զարգացմանը և շարունակական կատարելագործմանը, որը լիովին կհամապատասխաներ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային տեղեկանքներին:

4.11 Այսպիսով՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ Կառավարությունը և ՀՀ ԱԺ-ն որդեգրել են ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող Օմբուդսմենի մենաշնորհային դիրքի ամրապնդման քաղաքականությունը:

5. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մենաշնորհային ինստիտուտի ձևավորման վտանգները

5.1 Հայաստանի Հանրապետությունը մինչ այժմ ունեցել է չորս մարդու իրավունքների պաշտպան: Նախորդ երեք պաշտպաններից ոչ մեկը չի պաշտոնավարել մինչև իր լիազորությունների ավարտը և հրաժարական է տվել ժամկետից շուտ:

5.2 ՀՀ առաջին մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը պաշտոնավարեց 2004-2006թթ²⁶:

5.3 Մարդու իրավունքների երկրորդ պաշտպան Արմեն Հարությունյանը պաշտոնավարեց 2006-2011թթ.: Արմեն Հարությունյանի նկատմամբ ճնշումները սկսվեցին այն բանից հետո, երբ նա հանդես եկավ 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ արտահերթ զեկույցով: Պաշտպանը հայտնել էր նաև, որ օմբուդսմենի գրասենյակը պատրաստ է իրականացնել մարտի 1-ի դեպքերի անկախ փորձաքննությունը կամ մասնակցել աշխատանքներին: Արտահերթ զեկույցի պատճառով Պաշտպանը ՀՀ նախագահ Քոչարյանի կողմից արժանացավ «անհաջող կադր» որակմանը, որից հետո հրապարակավ հայտնեց իր և իր ընտանիքի անվտանգության նկատմամբ

²⁶ Ինչպես նշում է ՀՀ առաջին մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը իր հարցազրույցներից մեկում՝ 2004-2006 թթ ինքը ենթարկվում էր իշխանության կողմից լուրջ ճնշումների: Առաջին հրապարակային բախումը եղավ 2005-ի ձմռանը, երբ կառավարության նիստը, որը վարում էր հանրապետության նախագահ Քոչարյանը, Ալավերդյանը ցուցադրաբար լքեց: Պատճառն այն էր, որ նախագահը նրան զրկեց օրենքով տրված ելույթ ունենալու իրավունքից և առաջարկեց միայն հարց տալ: Կառավարության նիստում քննարկվում էր Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները սահմանափակող օրենքի նախագիծ ընդունելու հարցը: Երկրորդ բախումը տեղի ունեցավ 2005 թ. սեպտեմբերին, երբ Պաշտպանը հրապարակեց արտահերթ զեկույց վերնագրված «Սեփականության, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտումների մասին», որը Հյուսիսային և Գլխավոր պողոտաների կառուցապատման ժամանակ մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ էր: Նոյեմբերի 29-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով Պաշտպանը իրավունք է ստանում դիմել Սահմանադրական դատարան, և դեկտեմբերին Ալավերդյանը դիմեց կենտրոնի բնակիչների սեփականության իրավունքի խնդրով, կառավարության որոշումների սահմանադրականությունը պարզելու համար, սակայն չհիասցրեց հայցը ներկայացնել դատարանում: Հունվարի 4-ին նախագահի հրամանագրով Պաշտպանի աշխատակազմի կառավարումը հանձնվեց երեք պաշտոնյայից կազմված հանձնաժողովին՝ մինչև նոր Պաշտպանի ընտրությունը: Այսպես Պաշտպանը հեռացվեց պաշտոնից:



սպառնալիքների մասին և հրաժարական տվեց 2011 թվականին, չնայած իր լիազորությունների ժամկետը ավարտվում էր 2012 թվականին:

5.4 Երրորդ պաշտպանը՝ Կարեն Անդրեասյանն ընտրվեց 2011 մարտի 2-ին և պետք է պաշտոնավարեր մինչև 2017 թվականի մարտի 2-ը, սակայն իր հրաժարականը ներկայացրեց 2016 թվականի հունվարին: 2015 թ. Պաշտպանը ներկայացրեց արտահերթ զեկույց՝ արդար դատաքննության իրավունքի, արդարադատության համակարգում առկա կոռուպցիայի վերաբերյալ, որում անգամ նշվել էր դատավորներին տրվող կաշառքի չափերը, որը խիստ քննադատության արժանացավ առաջին հերթին ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի և ոչ թե հենց դատավորների կողմից: 2016 թ. հունվարին Կարեն Անդրեասյանը ներկայացրեց իր հրաժարականը, որի դրդապատճառները, ինչպես ինքն է նշել իր ֆեյսբուքյան էջում «Բազմաշերտ էին... եթե 2016-ին էլ հենց ես մնայի օմբուդսմեն, ապա այս կարևորագույն ինստիտուտն այլևս չէր լինի այդքան արդյունավետ, որքան դարձել էր երկար տարիների չարչարանքի շնորհիվ»:²⁷

5.5 Այսպիսով՝ նախորդ բոլոր երեք մարդու իրավունքների պաշտպանների մինչև լիազորությունների ժամկետի ավարտը հրաժարականների դրդապատճառները պայմանավորված են նրանց գործունեության հանդեպ գործադիր իշխանության կողմից գործադրած ճնշումներով և օրենսդիր մարմնի՝ ՀՀ ԱԺ-ի լռելյայն համաձայնությամբ: Բացառություն է կազմում ՀՀ երրորդ մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ ՀՀ ԱԺ պատգամավորների աննախադեպ հարձակումները:

5.6 Ելնելով այն հանգամանքից, որ Մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է անհատական ինստիտուտ, ՀՀ-ում գործադիր և օրենսդիր իշխանությունը նման գործելակերպի պայմաններում մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ գործադրված ճնշումները կարող են կաթվածահար անել Մարդու իրավունքների պաշտպանի միակ ինստիտուտը, որը կարող է չլինել և ավելին՝ ստանալ հակադարձում մի շարք մասնագիտացված մարդու իրավունքների պաշտպանների առկայության պայմաններում:

5.7 Գտնում ենք, որ ՀՀ ներկայիս Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյանը գտնում է, որ կամ չի հանդիսանալու ՀՀ գործադիր իշխանության «անհաջող կադր» կամ պատշաճ հետևություններ չի կատարել նախորդ երեք մարդու իրավունքների պաշտպանների գործունեության փորձից:

²⁷Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի եզրափակիչ ելույթը <https://www.youtube.com/watch?v=f665BQQG1jQ>

Տե՛ս նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի գնահատականը Կարեն Անդրասյանի հրաժարականի վերաբերյալ <http://hcav.am/events/14-01-2015-01/> <http://hcav.am/events/18-01-2016-698752301/>

6. Ամփոփում

Ելնելով վերոշարադրյալից, արձանագրում ենք, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի ներկայացված նախագիծը

- 6.1 ձևավորում է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մենաշնորհային դիրք,
- 6.2 սահմանափակում է քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների և փորձագետների արդյունավետ և գործընկերային ներգրավումը մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմներում,
- 6.3 ունի խտրական և տարբերակված մոտեցում ՀՀ կողմից վավերացված մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների նկատմամբ,
- 6.4 վտանգում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների զարգացումը: